



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

18.11.2021թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ  
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ  
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/99**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի  
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ  
Բողոք բերող՝ «Վերիտաս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Գ.  
Նազինյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,  
բժշկական սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ  
քննող անձ), քննության առնելով «Վերիտաս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից  
19.10.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

## **1. Գործի նախապատմությունը.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է չկայացած հայտարարել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժինը և պարտավորեցնել պատվիրատուին համապատասխանեցնել գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 19.10.2021թ.-ին:

19.10.2021թ.-ին [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/99 համարի ծածկագիրը:

27.10.2021թ.-ին, 05.11.2021թ.-ին և 18.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 05.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.11.2021թ.-ին:

## **2. «Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Վերիտաս» ՍՊԸ-ն 19.10.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «ԻՋԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ն բժշկական սարքերի գնման նպատակով 2021թ. հոկտեմբերի 12-ին հրապարակել է «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ- 21/08-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Պատվիրատուի կողմից հրապարակված գնանշման հարցման հայտարարության երկրորդ պարբերությունում գրված է հետևյալը «Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել վառելիքի մատակարարման պայմանագիր», մինչդեռ հրավերով պահանջվող և գնման առարկա հանդիսացող ապրանքը բժշկական սարք է:

1.2 Հրավերի թիվ 1 չափաբաժնի (Նեյրոմիոգրաֆ EMG) տեխնիկական բնութագիրը խտրական է, ուղղորդված և չի համապատասխանում «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017

թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին՝ «22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:»:

Հրավերի թիվ 1 չափաբաժնի (Նեյրոմիոգրաֆ EMG) տեխնիկական բնութագիրը խտրական է և ուղղորդված, ինչի պատճառով նշված տեխնիկական բնութագրին համապատասխանում է ընդամենը մեկ արտադրող՝ չեխական Deymed ընկերության TruTrace EMG մոդելը:

Տեխնիկական բնութագրի ցուցանիշները նույնությամբ արտագրված են այդ ընկերության կայքի համապատասխան բաժնից (Technical Specification): Կայքի հղումը հետևյալն է <https://devmed.com/trustrace-emg>:

Կայքից արտատրված հարվածները կցված են, որոնց միայն զուտ թվային ցուցանիշները համեմատելով պատվիրատուի բնութագրերի հետ պարզ է դառնում, թե որտեղից է վերցրել պատվիրատուն դրանք:

Մեր ընկերության կողմից կատարվել է շուկայում հայտնի արտադրողների տեխնիկական բնութագրերի համադրում պատվիրատուի կազմած թիվ 1 չափաբաժնի բնութագրի հետ, որի արդյունքում պարզվել է, որ պատվիրատուի հրապարակած մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրերին ողջ աշխարհում համապատասխանում է ՄԻԱՅՆ ՄԵԿ արտադրող, որը ՀՀ-ում ունի ներկայացուցիչ: Կից արտադրողի պատասխանը՝ արտատրված էլեկտրոնային փոստից:

Մանրակրկիտ ուսումնասիրվել և հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրերի հետ համեմատվել են հետևյալ հայտնի արտադրողների ապրանքները Natus ընկերության Dantec մոդելը, Neurosoft ընկերության ԷՄԳ սարքերի բոլոր մոդելները, Meducom ընկերության բոլոր մոդելները, Cadwell Industries և EMS արտադրողների մոդելները, ընդ որում անհամապատասխանությունները ոչ թե մեկ երկուսն են, այլ մեկ տասնյակից ավել և ուղղակի անհնար է մասնակցել այս մրցույթին որևէ այլ արտադրողի սարքով, քանի որ միանշանակ հայտը մերժվելու է տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության հիմքով, ինչն էլ ցանկացել է ապահովել պատվիրատուն:

Փաստացի մրցույթը կրում է ձևական բնույթ, քանի որ որևէ մրցակցության մասին խոսք գնալ չի կարող:

Այսօր աներկայացնելով արեխնիկական բնութագիրը ընդգծել ենք այն պահանջները, որոնք առանձին կամ իրար հետ համակցությամբ որոշիչ դեր են խաղում բնութագրի ուղղորդման հարցում դեպի չեխական DEYMED ընկերության TruTrace EMG մոդել:

Ընթացակարգի ծածկագիրը <b>ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1</b>
<p>Համակարգչային չափման համակարգ էՄԳ-ի և նյարդաբանության համար:            Նեյրոֆիզիոլոգիական չափման համակարգերը պետք է կարողանան լրացվել մոդուլներով և լինի առնվազն 6 կանալով:            Ի լրումն ստանդարտ էՄԳ ծրագրերի, նյարդահաղորդման արագությունների, համակարգը պետք է կարողանա համալրվել կախված առաջադրանքներից, օրինակ՝ էՄԳ-ի առաջադեմ վերլուծության ծրագիր (ներառում է էՄԳ մեկ մանրաթել և մակրո- էՄԳ), VEP, RR- ընդմիջում, մոնիտորինգի ծրագիր:            Պետք է ապահովի կարճ նյարդերի պարասխաններ            Պետք է ունենա ներկառուցված գրադարան            Ասեղնային էՄԳ պետք է նաև ապահովի ինտերֆերենցիոն պարամետրերի գրանցում            Մակրոէլեկտրոմիոգրաֆիայի էՄԳ ժամանակ պետք է կարողանա փարբեր ծանրաբեռնվածություններ ի ժամանակ հետազոտել մեծ քանակի մկաններ            Պետք է հագեցած լինի մուրթագրման միավորներով            Պետք է ունենա հարմարավետ առանձին ներյոմիոգրաֆիկ ստեղնաշար, որի շնորհիվ հետազոտությունը կարող է վերահսկվել կողքից:            Սարքը պետք է ունենա՝            Հիվանդների փոխանցի պահոց, հաշվեփոխություններ և ծրագրային ապահովման հարթակի վերանայում (անհրաժեշտ է համակարգի համար):            Պետք է լինի դյուրակիր շարժական՝ միաժամանակ ունենալով լիարժեք ֆունկցիոնալություն:            Պետք է աշխատի նաև մարտկոցով:            Հաշվեփոխությունների արագ և հեշտ կապարում            Պետք է ապահովի մշտապես մաքուր ազդանշան, նույնիսկ կեղտոտ միջավայրում:            Ներկառուցված հաշվեփոխությունների ծրագրակազմ, որը երաշխավորում է բարձր ճկունություն և համարեղելիություն:            Ավտոմատ փոքրիկ գործառույթ, որն ապահովում է առավելագույն հարմարավետություն և հարմարեցված է պահանջներին:            Ձեկոյցների պահում փոխանցի բազայում այն ձևաչափով, որը չի պահանջում լիցենզիաներ և փոխանցվում են հիվանդանոցների փոփոխվողական համակարգին:            Քանակական EMG ծրագրակազմ            Ծրագրային ապահովման մոդուլներ և լիցենզիաներ, առնվազն՝ շարժիչային և զգայական նյարդերի հաղորդունակություն, <b>F-ալիք, H ռեֆլեքս, թարթման ռեֆլեքս, մակրո էՄԳ:</b>            Միջինացված սինգլի ցուցադրման հնարավորություն            Շարժական միավորների գործողությունների պոտենցիալների քանակական վերլուծում իրական ժամանակում և համեմատություն նմուշների հետ:            Արդյունքների ստատիկ վերլուծություն:            Արդյունքների մշակում ըստ փոփոխության իմպուլսի            SEP էլեկտրական խթանիչ:            Ակտիվ էլեկտրոդների փոխանցի ապահովում ազդանշանի լավ որակի համար:            Դյուրին ինտերֆեյս:            Առցանց ռեժիմում ազատորեն ծրագրավորվող չափման ծրագրեր:            Ազդանշանների ձայնագրությունների պահպանում, վերարտադրում և դիտում:            Ախտորոշման արդյունքների մուրթագրելու հնարավորություն և ամփոփ հաշվեփոխությունների կազմում MS Word կամ Microsoft Excel-ի փոքրով:            Տվյալների անցանց վերանայում՝ պարամետրերի խմբագրման հնարավորությամբ:            Ծրագիրը հավելյալ պետք է ունենա առնվազն՝ <b>Voluntary Single Fiber, Stimulated Single Fiber, R-R Interval, SSR, Macro EMG, SEP, VEP</b> մոդուլների հնարավորություն  <b>Անալոգային ժամանակի հաստատությունը պետք է լինի ոչ պակաս քան 3.2, 0.32, 0,02:</b>  <b>Անալոգային նմուշառման հաստատությունը պետք է լինի ոչ պակաս քան՝ 50 կամ 60 կՀց յուրաքանչյուր կանալի համար:</b>  <b>Մուրթային դիֆերենցիալ դիմադրությունը՝ ոչ պակաս քան 10 GΩ զուգահեռ 25 pF:</b>            Առդիտ խթանիչ            Առավելագույն ինտենսիվությունը՝ ոչ ավել քան 137 դԲ SPL:  <b>խթանման քայլեր՝ ոչ ավել քան 1 դԲ:</b>  <b>խթանման փոսակ՝ ոչ պակաս քան սեղմում, բռնկում, փոնայնություն կամ ծրագրավորվող:</b>            Բնեռականություն՝ ոչ պակաս քան 3 փոսակ:  <b>խթանման փոստություն՝ ոչ ավել քան 0.05 ms- 80ms:</b>  <b>խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 250Հց:</b>  <b>էլեկտրական խթանիչ</b>  <b>խթանման ինտենսիվություն՝ ոչ պակաս քան 0.1մԱ- 100մԱ:</b>            Բնեռականություն՝ ոչ պակաս քան 4 փոսակ:  <b>Իմպուլսի փոստություն՝ ոչ պակաս քան 0.05-1ms:</b>  <b>խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 300Հց:</b></p>

Սարքը պետք է համալրված լինի հզոր դյուրակիր համակարգով՝ առնվազն 470 փակփակին հաճախականությամբ G7 17,3" FHD մոնիտորով i5-10210U պրոցեսորով / 8 / 512 / DVD / AMD530 / W10 / 8MH45EA  
Համակարգի համար պետք է տրամադրվի երաշխիք –12 ամիս  
Համակարգը պետք է տեղադրվի, տրամադրվի ուսուցում  
Համակարգի բոլոր բաղադրարտանքները պետք է մատակարարվի մեկ աղբյուրից և ունենա գործարանային երաշխիք  
Շահագործման ծնունդը պետք է լինի ռուսերեն լեզվով  
Ամբողջ համակարգի համար Сертификация Coomբeтсвeя, FDA, CE, ISO 9001 կամ համարժեք որակի սերտիֆիկացիաների առկայություն

Վստահաբար պնդում ենք, որ պատվիրատուն չի կարողանա ներկայացնել բողոք քննող անձին ողջ աշխարհում գեթ մեկ արտադրող, ում ապրանքը կհամապատասխանի հրապարակված ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր կետերի հետ:

Որպես հավելյալ ապացույց առ այն, որ հրավերի բնութագիրը արտագրված է կոնկրետ մեկ արտադրողի ապրանքի տվյալներից, կից ներկայացնում ենք սարքի ձեռնարկը, որը համադրելով պատվիրատուի հրապարակված ընթացակարգի հրավերի բնութագրերի հետ, կարելի է հեշտությամբ համոզվել, որ պատվիրատուն արտագրել է հենց այդ ձեռնարկից, նույնիսկ պահանջների հերթականությունն է նույնը: Պատվիրատուն ընդամենը մեկ երկու պարամետրի համար ավելի լայն միջակայք է սահմանել, քան գրված է ձեռնարկում և դրանով ցանկացել է տպավորություն ստեղծել, որ ոչ ամբողջն է արտագրված, սակայն փաստը մնում է այն, որ բնութագրում ուղղորդող, որոշիչ դեր խաղացող պահանջները մնացել են անփոփոխ՝ գրկելով որևէ արտադրողի գնային առաջարկ ներկայացնելու ու մրցակցելու հնարավորությունից:

Բացի այդ, նմանատիպ սարքերի շուկայական արժեքը տարանվում է 4. 500. 000-ից 5. 000. 000 ՀՀ դրամ, սակայն պատվիրատուն նախահաշվային գին է սահմանել 8. 000. 000 ՀՀ դրամ, ուստի հարց է նաև ծագում պետական միջոցների արդյունավետ ծախսման վերաբերյալ և կասկած է հարուցում մրցույթի օգտավետ իրականացումը:

Այսպիսով, չեն պահպանվել «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջները:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է չկայացած հայտարարել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊԶԲ-21/08-1» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժինը և պարտավորեցնել պատվիրատուին համապատասխանեցնել գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին:

«Վերիտաս» ՍՊԸ-ն ի լրումն 19.10.2021թ.-ին ներկայացված բողոքի, 25.10.2021թ.-ին լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ինչպես տեղյակ եք, մեր կողմից ներկայացված բողոքում (ԳԲԲԱ-ԼՕ-2021/99) հստակ նշել էինք, որ տեխնիկական բնութագիրը խտրական է, ուղղորդված է դեպի չեխական DEYMED ընկերության TrueTrace EMG մոդելը, իսկ մրցույթը կրելու է ձևական բնույթ, քանի որ որևէ մրցակցություն տեղի չի ունենալու:

Որպես հավելյալ ապացույցներ հակիրճ ներկայացնում ենք մրցույթի արդյունքները, որոնք մեր կողմից կանխատեսվել էին 100% ճշգրտությամբ, մասնավորապես մրցույթին մասնակցել է ընդամենը մեկ ընկերություն և այդ ընկերությունն առաջարկել է չեխական DEYMED ընկերության TrueTrace EMG մոդելը, այսինքն հենց այն մոդելը, որի մասին մենք բարձրաձայնում էինք նախքան մրցույթի հայտերի բացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ եթե պատվիրատուն կունենա որևէ դիրքորոշում այս մրցույթի հետ կապված, ապա խնդրում ենք այն ուղարկել մեր ընկերության էլեկտրոնային փոստին:»:

«Վերիտաս» ՍՊԸ-ն 03.11.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 01.11.2021թ.-ին Ձեր աշխատակազմի կողմից ուղարկված նամակի և կից նյութերի, ստորև, ներկայացվում է «Վերիտաս» ՍՊԸ դիրքորոշումը:

Պատվիրատուն 01.11.2021թ. թիվ 81 գրությամբ Ձեզ հայտնել է, որ, մեջբերում են. «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը գրված է մի քանի կարևոր տեխնիկական պահանջների վրա, որոնց աղբյուրը հանդիսանում են շուկայում առկա 5 փարբեր առաջատար ԷՄԳ սարքեր արտադրող ընկերության սարքավորումների բնութագրերի ամփոփումը (Չինական, Եվրոպական և Ճապոնական) արտադրության, որոնցից երկուսի գործարանային արտադրության տեխնիկական բնութագրերը՝ մատնանշելով կարևոր տեխնիկական պահանջները, որոնք ներառված են մրցույթի ներկայացված տեխնիկական բնութագրում:» մեջբերման ավարտ: Հաշվի առնելով վերոգրյալ տեքստի շարադրման առանձնահատկությունները, որոշ նախադասությունների անավարտ լինելը, որոշ դրվագներում նաև միմյանց հետ չկապակցված ձևակերպումների ու մտքերի օգտագործումը, կցված նյութերի ոչ ամբողջական լինելը, մեր կողմից դժվարությամբ կատարվեց նշված գրության և կից նյութերի վերլուծությունը:

Մեր կարծիքով, պատվիրատուի մոտ ստեղծվել է փապավորություն, որ կարելի է հինգ փարբեր ապրանքների բնութագրերից վերցնել հատվածներ, դրանք միավորել մեկ բնութագրի մեջ և հետո բողոք քննող անձի մոտ պնդել, որ մրցույթի դրված ապրանքի տեխնիկական բնութագրերից մի քանիսին համապատասխանում է այս մեկ արտադրողը,

իսկ այս մյուս տեխնիկական բնութագրերի մասով համապատասխանում է մեկ այլ արտադրող:

Եթե հակիրճ ձևակերպենք, ապա պատվիրատուն կամ չի ընկալում կամ ձևացնում է թե չի ընկալում, որ բողոք քննող անձին պետք է ներկայացնի մրցույթի դրված ապրանքի ԲՈԼՈՐ տեխնիկական բնութագրերին ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ համապատասխանող երկրորդ արտադրող, ոչ թե մի քանի առանձին պարամետրերով համընկնող արտադրողներ:

Պատվիրատուն 02.11.2021թ. թիվ 82 գրությամբ ուղարկել է կոնկրետ արտադրողի մոդել՝ *Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K*:

Ըստ պատվիրատուի, վերոգրյալ մոդելի սարքը ամբողջությամբ համապատասխանում է հայտարարված մրցույթի թիվ 1 չափաբաժնի բոլոր բնութագրերին:

Հարկ է նշել, որ պատվիրատուն միտումնավոր ուղարկել է գործարանային ձեռնարկի հակիրճ տարբերակը, ընդամենը 16 էջից բաղկացած, որտեղ բացակայում են թվային ցուցանիշները, թվային պարամետրերը: Այս խորամանկության նպատակն այն է, որ բողոք քննող անձը կամ Վերիպաս ՍՊԸ-ն հնարավորություն չունենան իրականացնել թվային ցուցանիշների, թվային պարամետրերի համադրումներ:

Հասկանալով պատվիրատուի նման գործելաոճի նպատակները, կից ներկայացնում ենք պատվիրատուի մատնանշած արտադրողի ամբողջական ձեռնարկը, որտեղ շարժանիքային ներկայացված են տվյալ մոդելի բոլոր թվային ցուցանիշները (էջ 311 և 312):

Ստորև, բերված աղյուսակում կներկայացնենք պատվիրատուի մատնանշած մոդելի պարամետրերից մի քանիսը, որոնք չեն համապատասխանում «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրերին:

Աղյուսակի առաջին սյունակում շարադրված են «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժնի թվով երեք բնութագրեր, որոնք չեն համապատասխանում երկրորդ սյունակում պատվիրատուի մատնանշած *Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K* բնութագրերին:

«ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով մրցույթի բնութագրերի հատվածներ	<i>Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K</i> ամբողջական ձեռնարկում նշված բնութագրերից հատվածներ
Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝ ոչ պակաս քան 10 GΩ ցուցահեռ 25 pF:	Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝ 200MΩ±10% (կից ներկայացված ձեռնարկի էջ 311՝ Input impedance):
Խթանման տեսակ՝ ոչ պակաս քան սեղմում, բռնկում, տոնայնություն կամ ծրագրավորվող:	Խթանման տեսակ՝ ոչ պակաս քան սեղմում, բռնկում, տոնայնություն (կից ներկայացված ձեռնարկի էջ 312):
Բևեռականություն՝ ոչ պակաս քան 4 տեսակ:	Բևեռականություն՝ 3 տեսակ - Condensation (positive) Rarefaction (negative) Alternating (կից ներկայացված ձեռնարկի էջ 312՝ Stimulation polarity):

Հերթով անդրադառնանք մատնանշված տարբերություններին:

Անհամապատասխանություն N 1: Տեղեկացնում ենք, որ GQ սիմվոլը դիմադրության չափման միավորն է, կարդացվում է գիգաօհմ և հավասար է 1.000.000.000 Օհմ, MQ սիմվոլը դիմադրության չափման միավորն է, կարդացվում է մեգաօհմ և հավասար է 1.000.000 Օհմ, 10 GQ-ը ավելի մեծ է քան 200 MQ, սակայն պատվիրատուն հրավերի բնութագրով պահանջել է ոչ պակաս քան 10 GO, ուստի ակնհայտ է որ Nihon Kohden ընկերության Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K մոդելի սարքը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին:

Անհամապատասխանություն N 2: Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է՝ Խթանման տեսակ՝ ոչ պակաս քան սեղմում, բռնկում, տոնայնություն կամ ծրագրավորվող, սակայն Nihon Kohden ընկերության Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K ձեռնարկում գրված է միայն սեղմում, բռնկում, տոնայնություն, այսինքն առկա չէ ծրագրավորվող տարբերակը:

Անհամապատասխանություն N 3: Հրավերով պահանջվել է «Բևեռականություն՝ ոչ պակաս քան 4 տեսակ», սակայն Nihon Kohden ընկերության Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K ձեռնարկում գրված է ընդամենը 3 տեսակ:

Իրականում անհամապատասխանություններն ավելի շատ են, սակայն ժամանակի սղության պատճառով ներկայացնում ենք միայն վերոգրյալները:

Ցանկանում ենք նաև բողոք քննող անձի ուշադրությունը հրավիրել հրավերի տեխնիկական բնութագրերում առկա մի քանի հակասությունների վրա:

Հակասություն N 1: Պատվիրատուն տեխնիկական բնութագրի մի հատվածում գրել է պահանջ՝ «Բևեռականություն՝ ոչ պակաս քան 3 տեսակ», սակայն չորս տող ներքև արդեն գրված է «Բևեռականություն՝ ոչ պակաս քան 4 տիպի»:

Հակասություն N 2: Պատվիրատուն տեխնիկական բնութագրի մի հատվածում գրել է պահանջ՝ «Խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 250Հց», սակայն չորս տող ներքև արդեն գրված է «Խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 300Հց»:

Նման հակասությունները մոլորության մեջ են գցում մասնակիցներին, քանի որ անհասկանալի է թե որ շեմն է ընդունելի պատվիրատուի համար:

Ամփոփելով կատարված վերլուծությունները, համադրությունները, կարող ենք արձանագրել, որ պատվիրատուն չկարողացավ ներկայացնել այնպիսի երկրորդ արտադրող, որի արտադրած սարքի տեխնիկական բնութագրերը համապատասխանեն հրավերով պահանջված ԲՈԼՈՐ տեխնիկական բնութագրերին: Սա ևս մեկ անգամ



ապացուցում է Վերիփասա ՍՊԸ այն դիրքորոշումը, որ հրավերի տեխնիկական բնութագրերի պահանջներին ողջ աշխարհում համապատասխանում է միայն DEYMED ընկերության TruTrace EMG:

Վերիփասա ՍՊԸ-ն պնդում է իր բողոքում ներկայացված պահանջը ողջ ծավալով:

Որպես վերջաբան, ցանկանում ենք նաև անդրադառնալ բողոք քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ պատվիրատուի հնչեցրած այն դիտարկմանը, որ սարքը նախատեսված է ծանր հիվանդների համար, խիստ անհրաժեշտ է, դրա կարիքը հրապարակ է և այլն:

Սա համարում ենք էժան շահարկում, որը ավանդաբար կիրառվում է ՀՀ տարբեր բժշկական կենտրոնների ներկայացուցիչների կողմից: Դրա նպատակը բողոք քննող անձի վրա բարոյական ճնշում գործադրելն է՝ տրամադրություն ստեղծելով, որ այդ որոշումից են կախված հիվանդների ճակատագրերը, ստիպելով բողոք քննող անձին կայացնել այնպիսի որոշում, որ խտրական և ուղղորդված բնութագրեր ունեցող մրցույթը չեղարկվի, մինչդեռ ակնհայտ է, որ պատվիրատուն պարտավոր է պահպանել գնումների մասին օրենսդրության պահանջները, մասնավորապես կազմել այնպիսի տեխնիկական բնութագիր, որին կհամապատասխանի երկու և ավելի արտադրող, հետեւաբար սարքի ձեռք բերման մրցույթի հետ կապված ցանկացած ուշացման, կասեցման կամ տեղարկման ողջ պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:»:

«Վերիփասա» ՍՊԸ-ն 09.11.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան պատվիրատուի հերթական դիրքորոշման, որը թվագրված է 05.11.2021թ., ներկայացնում ենք մեր փաստարկները:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N 1-ի վերաբերյալ պատվիրատուն բերել է այսպիսի «հիմնավորում», մեջբերում եմ.

«Դիֆերենցիալ դիմադրությունները NIHON, DEYMED, NEUROSOFT, NATUS, CONTEC և բազմաթիվ այլ հանրահայտ արտադրողների մոտ մի քանիսն են (առնվազն 2 և ավելի), և պատվիրատուն կարող է ընտրել, թե ինչ ամպլիֆայեր է ցանկանում համաձայն հեղազտությունների տեսակի և որակի: Վստահաբար կարող ենք պնդել, որ NIHON, DEYMED, NEUROSOFT, NATUS, CONTEC և այլ ընկերությունները առաջարկում են 200ՄՌ-ից մինչև 20000ՄՌ ամպլիֆայերներ: Նշված մրցույթային տեխնիկական պահանջում մենք նպատակ չենք հետապնդել դիֆերենցիալ դիմադրությամբ սահմանափակել մասնակիցների ընտրությունը, այլ նշվել է հստակ ամպլիֆայերի դիմադրությունը, որը պահանջվում է սարքի

հետ, հաշվի առնելով, որ մատակարարն ունի փարբեր ամպլիֆայերների ընտրության հնարավորություն: Հետևաբար կից ներկայացնում ենք Nihon ընկերության բնութագիրը, որտեղ նշված է, որ Nihon ընկերության սարքի դիֆֆերենցիալ դիմադրությունը կարող է լինել 200ՄՈ և ավելի բարձր, որը ցույց է փայլիս, որ ամպլիֆայերները փարբեր են և կարող են ընտրվել, հակառակ դեպքում արտադրողը չէր նշի > նշանը, այլ կսահմանափակվեր միայն հստակ ցուցանիշ նշելով: Ներկա պահին ՀՀ փարածքում առկա են Nihon ընկերության ամպլիֆայերներ, որոնց դիֆֆերենցիալ դիմադրությունը ավելի է, քան դա պնդում է բողոքաբեր կողմը: Սակայն, նույնիսկ եթե Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքը մատակարարվեր 200ՄՈ ցուցանիշով, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ՀՀ մրցույթին մասնակցելու սահմանումների այն կրիտարկվեր 10 GO զուգահեռ 25 pF պահանջին համարժեք, եթե այլ տեխնիկական պահանջները, որոնք հավաստում են պոտենցիալի և ԷՄԳ սիգնալի մաքրության ապահովումը նույնպես կլինեն համարժեք» մեջբերման ավարտ:

Այժմ հերթով, նախադասություն առ նախադասություն, անդրադառնանք պատվիրատուի այսպես կոչված հիմնավորումներին:

Առաջին և երկրորդ նախադասությամբ պատվիրատուն հայտարարում է, որ մի շարք ընկերություններ, այդ թվում NIHON ընկերության մոտ դիֆֆերենցիալ դիմադրությունները մի քանիսն են, ինչպես նաև այդ ընկերությունները առաջարկում են 200ՄԸ-ից մինչև 20000ՄՕ ամպլիֆայերներ, սակայն պատվիրատուն չի վկայակոչում որևէ աղբյուր, որևէ գործարանային ձեռնարկ կամ ուղեցույց, որտեղ այդպիս բան է գրված: Ընդհակառակը, Վերիփաս ՍՊԸ կողմից Ձեզ ներկայացվել է արտադրողի ամբողջական ձեռնարկը, որտեղ հստակ գրված է, որ Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքի մուտքային դիֆֆերենցիալ դիմադրությունը կազմում է  $200\text{M}\Omega \pm 10\%$  (կից ներկայացված ձեռնարկի էջ 311):

Այստեղ որևէ փարակարծություն կամ երկակի մեկնաբանման հնարավորություն ուղղակի չկա, քանի որ Վերիփաս ՍՊԸ-ն վկայակոչում է կոնկրետ ձեռնարկ, իսկ պատվիրատուն չի կարողացել վկայակոչել որևէ ձեռնարկ, ուղեցույց կամ այլ պաշտոնական փաստաթուղթ կամ նամակ արտադրողից, որով կհաստատվեն պատվիրատուի հայտարարությունները:

Երրորդ նախադասությամբ պատվիրատուն հայտնում է, որ նպատակ չի հետապնդել դիֆֆերենցիալ դիմադրությամբ սահմանափակել մասնակիցների ընտրությունը, սակայն փաստն այն է, որ հրավերի տեխնիկական բնութագրում առկա է հստակ պահանջ՝

«Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝ ոչ պակաս քան 10 GQ զուգահեռ 25 PF»: Սա նշանակում է, որ ցանկացած ընկերություն, որը կառաջարկեր 10 GO-ց պակաս մուտքային դիֆերենցիալ դիմադրությամբ ապրանք, միանշանակ մերժվելու էր բնութագրին անհամապատասխանության հիմքով: Բացի այդ, եթե պատվիրատուն չէր ցանկանում մուտքային դիֆերենցիալ դիմադրությամբ սահմանափակել մասնակիցների ընտրությունը, ապա էլ ինչու էր կոնկրետ պահանջ դնում: Եթե բնութագրում դրվել է պահանջ, նշանակում է մասնակիցները հայտ ներկայացնելուց առաջ համադրում են իրենց կողմից առաջարկվելիք ապրանքի բնութագրերը հրավերի տեխնիկական բնութագրի հետ և եթե առկա է անհամապատասխանություն, ապա չեն մասնակցում այդ մրցույթին, ինչը և տեղի է ունեցել: Այս դեպքում, եթե պատվիրատուի նպատակը մասնակիցներին ֆիլտրելը չէր, ապա չէր ներառի այդ պահանջը: Եթե պատվիրատուն ներառել է այդ պահանջը բնութագրում ու կողքն էլ գրել ոչ սոսկա ուն 10 GQ, ուրեմն նպատակը հենց ֆիլտրելն է:

Հաջորդ նախադասությամբ պատվիրատուն հայտարարում է, որ ներկայացնում է Nihon ընկերության բնութագիրը, որտեղ ըստ պատվիրատուի նշված է, որ Nihon ընկերության սարքի դիֆերենցիալ դիմադրությունը կարող է լինել 200UQ և ավելի բարձր և որպես փաստարկ բերում է > նշանի առկայությունը:

Բողոք քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ պատվիրատուն ներկայացրել է այլ մոդելի ձեռնարկ, մասնավորապես պատվիրատուի մեջբերած ձեռնարկի առաջին էջի վրա գրված է Neuropack S1 MEB-9400 EMG/NCV/EP Measuring System, մինչդեռ պատվիրատուն իր նախորդ դիրքորոշմամբ հայտնել էր, որ իր տեխնիկական բնութագրին համապատասխանող երկրորդ արտադրողի մոդելը հետևյալն է՝

Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K: Փաստացի պատվիրատուն բողոք քննող անձին է ներկայացրել այլ մոդելի սարքավորման ձեռնարկ, բաղկացած 6 էջից (մոդելների տարբերությունը K տառն է՝ MEB-9400 և MEB-9400K):

Պատվիրատուն համառորեն չի ցանկանում ընդունել, որ սարքի ամբողջական ձեռնարկում գրված է  $200MQ \pm 10\%$  և << գնումների հետ կապված բողոք քննող անձին է ներկայացրել այլ ձեռնարկ, քանի որ կարծում է, որ այդ ձեռնարկում գրված ցուցանիշը «Input impedance: > 200 MO (differential mode)» բավարարում է հրավերի տեխնիկական բնութագրին: Եթե նույնիսկ << գնումների հետ կապված բողոք քննող անձը հիմք ընդունի պատվիրատուի կողմից ներկայացված այլ մոդելի սարքի ձեռնարկը, ապա ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հետևյալ փաստի վրա: > 200 MQ պահանջը ամենևին չի

նշանակում, որ այն ավել է նաև 10 GQ-ից: Հրավերով պահանջվում է 10 GQ-ից ոչ պակաս, իսկ պատվիրատուի մեջբերած ձեռնարկում գրված է >200 MQ, ինչու նշանակում է, որ մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը մի փոքր է մեծ 200 MQ-ից, այլ ոչ թե 50 անգամ, ինչպես անհիմն ներկայացնում է պատվիրատուն: Անտրամաբանական կլիներ, եթե արտադրողը իր ձեռնարկում մուտքային դիֆերենցիալ դիմադրության մեծությունը գրեր >200 MQ դրա փակ նկարի ունենար, որ այն 50 անգամ մեծ է և կազմում է 10GQ: Ընհակառակը, եթե մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը 10GQ-ին մոտ թիվ լիներ, ապա Nihon Kohden ընկերությունը հենց այդպես էլ կգրեր, այլ ոչ թե կգրեր 50 անգամ պակաս արժեքով ցուցանիչ՝ 200 MQ: Այլ կերպ ասած, եթե Nihon Kohden ընկերությունը գրել է > 200 MQ, ուրեմն այդ ցուցանիչը գտնվում է 200 MQ մոտակայքում, այլ ոչ թե դրանից 50 անգամ մեծ սահմաններում:

Ինչ վերաբերվում է պատվիրատուի այն պնդմանը, որի համաձայն եթե Neuropack S'1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքը մատակարարվեր 200ՄՕ ցուցանիշով, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն կդիտարկվեր 10 GC զուգահեռ 25 pF պահանջին համարժեք, ապա հարկ ենք համարում նշել, որ որևէ պտրենցիալ մասնակից նկատելիով հրավերում գրված պահանջը՝ «Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝ ոչ պակաս քան 10 GO զուգահեռ 25 pF», չէր մասնակցի մրցույթին 200ՄՕ մուտքային դիմադրություն ունեցող սարքով, քանի որ գնահատող հանձնաժողովը կունենար բոլոր հիմքերը մերժելու հայտը: Ի վերջո համարժեքության վերաբերյալ դիտարկումներ կարելի է անել օրինակ տերմինների կամ տեխնոլոգիաների մասով, բայց ոչ երբեք թվերի, այսինքն եթե հրավերում գրված է կոնկրետ թվից ոչ պակաս ու մասնակիցը ներկայացնում է այդ թվից պակաս պարամետրով ապրանք, այստեղ համարժեքության հարց չի կարող քննարկվել, քանի որ մասնակցի առաջարկած ցուցանիշը կամ պակաս է կամ պակաս չէ պահանջված ցուցանիշից: Եթե պատվիրատուի համար այդ պարամետրը էական չլիներ, ապա այն չէր սահմանվի մրցույթում:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆՈՒԹՅՈՒՆ N 2-ի վերաբերյալ պատվիրատուն ներկայացրել է «հիմնավորում», որտեղ նշում է, որ Neuropack S'1 EMG/EP MEASURING SYSTEM MEB- 9400K սարքում առկա է ծրագրավորվող փարբերակը, մինչդեռ 326 էջից բաղկացած ձեռնարկի որևէ էջում դրա մասին խոսք չկա:

Հաջորդ նախադասությամբ պատվիրատուն հայտնում է, որ բնութագրում հստակ և հայերեն լեզվով նշել են «Խթանման տեսակ՝ ոչ պակաս քան սեղմում, բռնկում,

տոնայնություն կամ ծրագրավորվող», մինչդեռ 326 էջից բաղկացած ձեռնարկում գրված է միայն «Click, Tone burst»:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆՈՒԹՅՈՒՆ N3-ի վերաբերյալ պատվիրատուն ներկայացրել է «հիմնավորում», որտեղ նշում է, որ Nihon ընկերության սարքում բևեռականության փոփոխությունը զանազան են, և ունեն փարբեր քայլերով փոփոխվելու հնարավորություն, սակայն որևէ փաստարկ չի բերում, թե այդ դեպքում ինչու արտադրողը չի նշել այդ մասին իր ձեռնարկում, մասնավորապես 326 էջից բաղկացած ձեռնարկի որևէ էջում խոսք չկա 4 փոփոխության բևեռականության փոփոխության առկայության մասին:

Հակասության 1 և 2-ի վերաբերյալ պատվիրատուի դիրքորոշման հետ համաձայն ենք, դրանք չենք պնդում:

Հարկ է նշել, որ հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխանող երկրորդ արտադրող ներկայացնելու և այդ երկրորդ արտադրողի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի բոլոր պահանջներին ապացուցելու պարտականությունը դրված է պատվիրատուի վրա, այլ ոչ թե բողոքաբերի: Պատվիրատուն պետք է ապացուցի, որ իր նշած Nihon Kohden ընկերության Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքի բոլոր ցուցանիշները համապատասխանում են հրավերի պահանջներին, այլ ոչ թե Վերիպաս ՍՊԸ-ն բացահայտի այն պարամետրերը, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանում: Բացի այդ, հրավերում առկա են այնպիսի պահանջներ, այնպիսի ցուցանիշներ (դրանք մեր կողմից ընդգծվել են մեր բողոքում), որոնք որևէ կերպ չեն հաստատվում արտադրողի ձեռնարկում, օրինակ հետևյալ պահանջը՝ «Անալոգային ժամանակի հաստատումը պետք է լինի ոչ պակաս քան 3.2, 0.32, 0,02»: Պատվիրատուն որևէ կերպ չի արձագանքել այդ պահանջի ուղղորդող լինելու վերաբերյալ մեր բողոքին:

Հաշվի առնելով այն, որ թե մեր, թե պատվիրատուի կողմից ներկայացվում են հակադիր դիրքորոշումներ, առաջարկում ենք պատվիրատուին ապացուցել իր դիրքորոշումների հավաստիությունը կոնկրետ փաստաթղթով՝ կամ արտադրողի ձեռնարկով կամ արտադրողից ստացված պաշտոնական նամակով, որտեղ գրված կլինեն պատվիրատուի կարծիքով վիճահարույց անհամապատասխանությունների պատասխանները:

Մեր ընկերությունը կողմ է փաստարկված մոտեցումների կամ ձեռնարկ, ուղեցույց, բրոշյուր կամ պաշտոնական նամակ արտադրողից, հակառակ դեպքում բոլոր հայտարարությունները հիմնադրուկ են:

Եթե պատվիրատուն կներկայացնի իր հայտարարություններ նամակ, որով Nihon Kohden ընկերությունը կհաստատի, որ բողոք քննող անձին մեր կողմից ներկայացված 326 էջից բաղկացած ձեռնարկը թերի է, հին կամ ոչ ակտուալ, ինչպես նաև կհաստատի, որ

1. Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքի մուտքի դիֆերենցիալ դիմադրությունը պակաս չէ 10 GΩ ցուցադրելով 25 pF-ից

2. Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքում առկա է ծրագրավորվող տարբերակ

3. Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքն ունի բևեռականության 4 տիպ

4. Անալոգային ժամանակի հաստատությունը պակաս չէ 3.2, 0.32, 0.02-ից, ապա, Վերիտաս ՍՊԸ պատրաստ է ընդունել, որ պատվիրատուն լիովին ապացուցեց իր արդարացի լինելը:»:

«Վերիտաս» ՍՊԸ-ն 10.11.2021թ.-ին ներկայացված գրությամբ հավելել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ մեր ընկերությունը հարցում էր ուղարկել Nihon Kohden ընկերությանը: Նամակում խնդրել էինք արտադրողին պատասխանել, թե որքան է կազմում Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K մոդելի «Անալոգային ժամանակի հաստատություն»-ը:

Արտադրողը պատասխանել է, որ այդ մոդելի սարքը հանված է արտադրությունից:

Այսինքն պատվիրատուն մի կողմից հայտարարում է, որ աշխարհում առկա է ևս մեկ արտադրող, որի MEB-9400K մոդելի սարքը համապատասխանում է իր հայտարարած մրցույթի տեխնիկական բնութագրի բոլոր պահանջներին, սակայն մյուս կողմից պարզվում է, որ պատվիրատուի մատնանշած այդ մոդելը արտադրությունից հանված է, այն այլևս չի արտադրվում:

Ձեզ եմ ուղարկում ինչպես մեր հարցման, այնպես էլ արտադրողի պատասխանի էկրանից կատարված արտատպված ֆայլերը, սքրինշոթերը, այնպես էլ Ձեր աշխատակազմի էլեկտրոնային հասցեին եմ վերաուղղորդում (forward) արտադրողի բուն պատասխանը:»:

**3. «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 20.10.2021թ.-ին թիվ /ԲԲԱ-ԼՕ/2/17177-2021 գրությամբ դիմել է «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 19.10.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Պատվիրատուն 22.10.2021թ.-ին թիվ 78 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ի պատասխան Ձեր 20.10.2021թ գրության, հայտնում ենք Ձեզ, որ կտրկանապես մերժում են որևիցե մեղադրանք առ այն, որ իբր տեխնիկական բնութագիրը գրված է ուղղորդված կամ ունի որևիցե մեկ սարքին համապատասխան: Բնութագիրը գրված է մեր մասնագետի կողմից հիմնվելով մի քանի կարևոր տեխնիկական պահանջի վրա, որոնց աղբյուրը հանդիսանում շուկայում առկա 5 տարբեր առաջատար ԷՄԳ սարքեր արտադրող ընկերության սարքավորումների բնութագրերի ամփոփումը (DEYMED, NIHON KOHDEN, NEUROSOFT և այլն), իսկ մեր կողմից կազմված տեխնիկական պահանջը չի կարող հանդիսանալ մեկ սարքի բնութագրից արտագրված: Սարքը, որը մենք տեխնիկական պահանջով նշել ենք, պետք է ունենա հստակ և ուժեղ ազդանաշանի գրանցման հնարավորություն, նույնիսկ բազմակի արտաքին աղմուկների միջավայրի ներքո, քանի որ Իջևանի ԱԱՊԿ-ն գտնվում է փողոցին մոտ, որտեղ աղմուկները առաջացնում են արտեֆակտներ, իսկ շուկայում բազմաթիվ սարքեր, որոնց հետ մեր մասնագետը արդեն իսկ առնչվել է աշխատել է տարբեր հիվանդանոցներում նման աղմուկների ներքո հստակ ներդրմի հոգրաֆիկ սիգնալ արտաբերել չեն կարող: Սարքը պետք է լինի շարժական, քանի որ ԱԱՊԿ-ն պետք է նաև սպասարկի անմիջապես տարածքից դուրս, և աշխատի մարտկոցով, քանի որ պետք է կարողանանք տեղամասային դժվարամատչելի շրջաններում բուժամբուլատորիաներում, տնային պայմաններում կամ բուժկետերում նույնպես կատարենք հեղափոխություններ: Այդ տեղափոխման դեպքում նաև ուժեղ սիգնալի ապահովումը նույնպես կարևոր է: Սարքի համար օգտագործվող ծրագրային ապահովումը պետք է լինի ինտուիտիվ հասկանալի, վստահելի, արդեն իսկ տեղադրված շարժական համակարգչի մեջ, առավելագույն պարզ, քանի որ ծրագրավորման մասնագետների պակասի պատճառով մենք պետք է ունենանք սարք, որտեղ ծրագրային սխալները*

նվազագույն են, իսկ համակարգչի օգտագործման հմտությունները բժիշկի կողմից հասցված են նվազագույնի: Մեր մասնագետը ունի թերի համակարգչային գիտելիքներ, հետևաբար այդ սարքը պետք է լինի շատ պարզ օգտագործման մեջ: Ձեր կողմից մատնանշված սարքերի մատնանշումը ցույց է տալիս, որ մասնագետների պակասի պատճառով մենք պետք է ունենանք սարք, որտեղ ծրագրային սխալները նվազագույն են, իսկ համակարգչի օգտագործման հմտությունները բժիշկի կողմից հասցված են նվազագույնի: Մեր մասնագետը ունի թերի համակարգչային գիտելիքներ, հետևաբար այդ սարքը պետք է լինի շատ պարզ օգտագործման մեջ: Ձեր կողմից մատնանշված սարքերի մատնանշումը ցույց է տալիս, որ դուք Ձեր գրությամբ մեզ հորդորում եք ընդգրկել Ձեր կողմից նշված սարքը ընդգրկել տեխնիկական պահանջի մեջ, ինչը հակասում է օրենքին: Մեր կողմից կազմված ամփոփ բնութագիրը ունի պահանջի այն բաղադրյալները, որը մեզ հարկավոր է անխափան, արդյունավետ և երկարատև աշխատանքի համար:»:

Պատվիրատուն 01.11.2021թ.-ի թիվ 81 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով մրցույթի թիվ-1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը գրված է մի քանի կարևոր տեխնիկական պահանջների վրա, որոնց աղբյուրը հանդիսանում են շուկայում առկա 5 տարբեր առաջատար էՄԳ սարքեր արտադրող ընկերության սարքավորումների բնութագրերի ամփոփումը /Չինական, Եվրոպական և Ճապոնական արտադրության/, որոնցից երկուսի գործարանային արտադրության տեխնիկական բնութագրերը՝ մատնանշելով կարևոր տեխնիկական պահանջները, որոնք ներառված են մրցույթի ներկայացված տեխնիկական բնութագրում:»:

Պատվիրատուն 02.11.2021թ.-ի թիվ 82 գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է «ԻԱԱՊԿ-ԴՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժնի էՄԳ սարքեր արտադրող ընկերության սարքավորումների /Չինական, Եվրոպական և Ճապոնական արտադրության/ ավելի հստակ մատնանշված գործարանային տեխնիկական բնութագրերը:

Պատվիրատուն 05.11.2021թ.-ի թիվ գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան Ձեր կողմից մեզ փոխանցած «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով մրցույթի առաջին չափաբաժնով բողոքարկող կողմի գրությանը հայտնում ենք հետևյալը.

Վստահաբար պնդում ենք, որ ներկայացված տեխնիկական պահանջները համաձայն «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով մրցույթի, հանդիսանում են առնվազն



երկու մադակարար ընկերությունների կողմից արտադրվող սարքերին համարժեք: Մեր կողմից նշված տեխնիկական պահանջները կազմված են այն սկզբունքով, որտեղ, եթե բնութագրի որևիցե պահանջ չի համապատասխանում կամ չունի համարժեքություն առնվազն երկու մադակարարից, ապա այն չի կարող հանդիսանալ մրցույթային տեխնիկական պահանջի մաս:

Ակներև է, որ մանրանշված նկատառումները, որոնք բողոքարկող կողմը փորձում է ցույց տալ իբր «անհամապատասխանություններ», կազմված են ոլորտին և սարքավորումներին մեղմ ասած լիարժեք կոմպերենություն չունեցող մարդկանց կողմից, փորձում են պիտակավորել և ստրացուցիչ ակնարկներով անհիմն մեղադրել տնտեսվարող սուբյեկտին չունենալով դրա համար հիմնավոր և օրինական ուժ ունեցող ապացույցներ:

Անդրադառնալով «Անհամապատասխանություններ»-ի մեկնաբանություններին՝

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N1-ում նշված է, որ դիֆֆերենցիալ դիմադրությունները պետք է լինեն ոչ պակաս քան 10ԳՉ, իսկ բողոքարկող կողմը նշում է, որ Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K ամբողջական ձեռնարկում նշված է, որ դիֆֆերենցիալ դիմադրությունները կազմում են 200ՄՉ, որը, համաձայն բողոքարկող կողմի պնդման, հանդիսանում է բավարար ապացույց, որ նշված սարքը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.

Դիֆֆերենցիալ դիմադրությունները NIHON, DEYMED, NEUROSOFT, NATUS, CONTEC և բազմաթիվ այլ հանրահայտ արտադրողների մոտ մի քանիսն են (առնվազն 2 և ավելի), և պատվիրատուն կարող է ընտրել, թե ինչ ամպլիֆայեր է ցանկանում համաձայն հեղափոխությունների տեսակի և որակի: Վստահաբար կարող ենք պնդել, որ DEYMED, NIHON, NEUROSOFT, NATUS, CONTEC և այլ ընկերությունները առաջարկում են 200ՄՉ-ից մինչև 20000ՄՉ ամպլիֆայերներ:

Նշված մրցույթային տեխնիկական պահանջում մենք նպատակ չենք հետապնդել դիֆֆերենցիալ դիմադրությամբ սահմանակել մասնակիցների ընտրությունը, այլ նշվել է հստակ ամպլիֆայերի դիմադրությունը, որը պահանջվում է սարքի հետ, հաշվի առնելով, որ մադակարարը ունի փարբեր ամպլիֆայերների ընտրության հնարավորություն: Հետևաբար կից ներկայացնում ենք Nihon ընկերության բնութագիրը, որտեղ նշված է, որ Nihon ընկերության սարքի դիֆֆերենցիալ դիմադրությունը կարող է լինել 200ՄՉ և ավելի բարձր, որը ցույց է տալիս, որ ամպլիֆայերները փարբեր են և կարող են ընտրվել, հակառակ

դեպքում արտադրողը չէր նշի > նշանը, այլ կսահմանափակվեր միայն հստակ ցուցանիշ նշելով:

Ներկա պահին ՀՀ տարածքում առկա են Nihon ընկերության ամպլիֆայերներ, որոնց դիֆֆերենցիալ դիմադրությունը ավելի է, քան դա պնդում է բողոքարկող կողմը:

Սակայն, նույնիսկ եթե Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքը մատակարարվեր 200ՄՉ ցուցանիշով, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ՀՀ մրցույթին մասնակցելու սահմանումների այն կրիտարկվեր 10ԳՉ զուգահեռ 25 pF տեխնիկական պահանջին համարժեք, եթե այլ տեխնիկական պահանջները, որոնք հավաստում են պոտենցիալի և ԷՄԳ սիգնալի մաքրության ապահովումը նույնպես լինեն համարժեք:

Հիշեցնում ենք, որ բնութագրի կազմումը ունի կարևոր նպատակներ.

- ընտրել սարք, որը մեր տարածաշրջանում ապահովի որակյալ և առանց արտեֆակտների ԷՄԳ սիգնալ

- ունենա հեշտ և դյուրընկալելի համակարգչային ինտերֆեյս,

- լինի շարժական

- աշխատի մարտկոցով:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ N2-համաձայն բողոքարկող կողմի, տեխնիկական պահանջում ներկայացվում է ԽԹԱՆՄԱՆ ՏԵՍԱԿ ոչ պակաս քան սեղմում, բռնկում, տոնայնություն կամ ծրագրավորվող, սակայն Nihon Kohden ընկերության Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K ձեռնարկում գրված է միայն սեղմում, բռնկում, տոնայնություն, այսինքն առկա չէ ծրագրավորվող փարբերակը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.

Թեպետև Neuropack S1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K սարքում առկա է նաև ծրագրավորվող փարբերակը, որը սակայն արտադրող գործարանը հավելյալ գումարի դիմաց է պատրաստ ավելացնել սարքի մեջ, սակայն, մենք, հաշվի առնելով մատակարարի համար նման օպցիոնալ փարբերակի պատվիրելու բարդությունը և դրա հետ կապված գնի թանկացման հնարավորությունը, տեխնիկական բնութագրում հստակ և հայերեն լեզվով նշել ենք, որ ծրագրավորվող խթանման տեսակը պարտադիր չէ գրելով է ԽԹԱՆՄԱՆ ՏԵՍԱԿ ոչ պակաս քան սեղմում, բռնկում, տոնայնություն կամ ծրագրավորվող: Սույնով մենք նկատի ունենք, որ կարող է լինել ԿԱՄ ՏՈՆԱՅՆՈՒԹՅԱՆ, ԿԱՄ ԾՐԱԳՐԱՎՈՐՎՈՂ խթանման տեսակ: Տեխնիկական բնութագրով չի պահանջում բոլոր նշված չորս խթանման

տեսակները, այլ տալիս է ընտրություն ներկայացնել ԿԱՄ տանայնություն, ԿԱՄ ծրագրավորող տարբերակը:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆՈՒԹՅՈՒՆ N3-համաձայն բողոքարկող կողմի, տեխնիկական պահանջում ներկայացվում է «Քննականություն ոչ պակաս, քան 4 տեսակ» սակայն Nihon Kohden ընկերության Neuropack S'1 EMG/EP MEASURING SYSTEM MEB-9400K ձեռնարկում գրված է ընդամենը 3 տեսակ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.

Այստեղ հորդորում ենք բողոքարկող կողմին ուշադիր և հետևողական կրկին ստուգել տեխնիկական բնութագիրը, որտեղ պահանջը ներկայացվում է էլեկտրական խթանիչների համար քննականությունների ՏԻՊԵՐԻՆ, այլ ոչ թե տեսակներին: Բողոքարկող կողմը հավանաբար շփոթում է «տեսակը» «տիպ» բառի հետ, քանի որ տեխնիկական պահանջում նշված է ոչ թե «Քննականություն ոչ պակաս, քան 4 տեսակ» ինչպես բողոք ներկայացնողը մեջբերում է իր գրության մեջ, այլ «Քննականություն ոչ պակաս, քան 4 տիպ»: Nihon ընկերության սարքում քննականության տիպերը զանազան են, և ունեն տարբեր քայլերով փոփոխվելու հնարավորություն:

ՄԵՆՔ պատրաստ ենք տրամադրել լրացուցիչ ժամանակ և մանրամասն պարզաբանել յուրաքանչյուր նկատողությունը, սակայն վստահեցնում ենք, որ գրագետ և խելացի մասնագիտական աուդիտը կհայտնաբերի, որ սարքավորումները իսկապես համապատասխանում են պահանջներին:

Հակասություն N1-ում նշված է, որ տեխնիկական բնութագրում գրված է պահանջ «Քննականություն ոչ պակաս քան 3 տեսակ», սակայն չորս տող ներքև արդեն գրված է «Քննականություն ոչ պակաս քան 4 տիպ»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.

Առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել և հստակ տարրորոշել, թե որ խթանիչին է վերաբերում պարամետրը:

«Քննականություն ոչ պակաս քան 3 տեսակ» պարամետրը պատկանում է Աուդիո խթանիչին, իսկ «Քննականություն ոչ պակաս քան 4 տիպի» պարամետրը էլեկտրական խթանիչին:

Հակասություն N2-ում նշված է, որ, մեջբերում եմ.

«Պարվիրատուն տեխնիկական բնութագրի մի հատվածում գրել է պահանջ « խթանման առավելագույն հաճախականությունը ոչ ավել քան 250 Հց», սակայն չորս տող

ներքև արդեն գրված է «Խթանման առավելագույն հաճախականությունը ոչ ավել քան 300 Հց». մեջբերման ավարտ:

#### ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.

Ուշադրություն դարձնելով հայրին, կարող եք տեսնել, որ մինչ «Խթանման առավելագույն հաճախականությունը ոչ ավել քան 250 Հց» գրված է (ավելի հստակ վեց տող վերև) «Աուդիո խթանիչ», այսինքն տվյալ պարամետրը վերաբերում է «Աուդիո խթանիչ»-ին, իսկ չորս տող ներքև գրված «Խթանման առավելագույն հաճախականությունը ոչ ավել քան 300 Հց» վերաբերում է «Էլեկտրական խթանիչ»-ին, որը գրված է անմիջապես չորրորդ տող վերև:

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Ցանկանում ենք նաև սևեռել Ձեր ուշադրությունը այն փաստին, որ հանձնաժողովին որևիցե սարքավորման, մոդելի, արտադրողի պաշտոնական նյութեր տրամադրելիս մենք ներկայացրել ենք այն ամենը, ինչը մենք գտել ենք համացանցի ազատ ռեսուրսներից, առկա հավաստի աղբյուրներից նախապես ճշտելով նրանց հավաստիությունը (որոշ սարքերի համար նաև զրուցել ենք Հայաստանի այն բժշկական կառույցների հետ, որտեղ արդեն նույն սարքը տեղադրված է, օր. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ, Էկոսենս, Ստեփանակերտի ԲԿ, Քանաքեռ-Զեյթուն ԲԿ, ԵՊԲՀ, Սուրբ Աստվածամայր ԲԿ), քանի որ գիտակցում ենք, որ ձեռնարկում կամ տեղեկատվական նյութերում որոշ ցուցանիշներ կարող են լինել փոփոխված, թերի, կամ հնացած:

Թերևս հորդորում ենք բողոքարկող կողմին նշված «անհամապատասխանություններ» կազմելիս լինել պատասխանատու և ճշտապահ, ստուգել նրանք ոչ միայն ձեռնարկից, այլ նաև անմիջապես արտադրողից, քանի որ պատասխանատվությունը սխալ հիմնավորումների համար կարող է վնասել նրանց սկսնակ կառույցի համբավին: Արդարացի կլինեք առերես նիստի ընթացքում առողջ քննարկման ժամանակ պարզել բոլոր տեխնիկական հարցադրումները, այլ ոչ թե նենգաբար օգտագործելով զայրույթ առաջացնող բառակույտեր «ձևացնում է... հասկանալով գործելաճի նպատակը... էժան շահարկում», տարված տառակերտությամբ, մոլագար և առանց մասնագիտական վելուծության գալ ծիծաղ առաջացնող դատարկ եզրահանգումների:

Խնդրում ենք ՀՀ գնումների հետ կապված բողոքների քննող կոմիտեին պահանջել բողոքարկող կողմից, ինչպես նաև բոլոր մասնակիցներից ներկայացնել բժշկական սարքավորումներ սպասարկման համար համապատասխան և լիարժեք

վերապատրաստումը, որը ենթադրում է հիմնական միջոց հանդիսացող սարքավորումների հետագա երաշխիքային սպասարկումը»:

**4. ԳԲԲԱ-ԼՕ-2021/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 12.10.2021թ.-ին հայտարարվել է «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին չափաբաժնի մասով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	33141174/3	Նեյրոմիոգրաֆ EMG	<p>Համակարգչային չափման համակարգ ԷՄԳ-ի և նյարդաբանության համար:</p> <p>Նեյրոֆիզիոլոգիական չափման համակարգերը պետք է կարողանան լրացվել մոդուլներով և լինի առնվազն 6 կանալով:</p> <p>Ի լրումն ստանդարտ ԷՄԳ ծրագրերի, նյարդահաղորդման արագությունների, համակարգը պետք է կարողանա համալրվել՝ կախված առաջադրանքներից, օրինակ՝ ԷՄԳ-ի առաջադեմ վերլուծության ծրագիր (ներառում է ԷՄԳ մեկ մանրաթել և մակրո- ԷՄԳ), VEP, RR- ընդմիջում, մոնիտորինգի ծրագիր:</p> <p>Պետք է ապահովի կարճ նյարդերի պատասխաններ</p> <p>Պետք է ունենա ներկառուցված գրադարան</p> <p>Ասեղնային ԷՄԳ պետք է նաև ապահովի ինտերֆերենցիոն պատտերնիզացում</p> <p>Մակերեսային միակնալ ԷՄԳ ժամանակ պետք կարողանա տարբեր ծանրաբեռնվածություններ ի ժամանակ հետազոտել մեծ քանակի մկաններ</p> <p>Պետք է հագեցած լինի մուտքագրման միավորներով</p> <p>Պետք է ունենա հարմարավետ առանձին ներյոմիոգրաֆիկ ստեղնաշար, որի շնորհիվ հետազոտությունը կարող է վերահսկվել կողքից:</p> <p>Սարքը պետք է ունենա՝</p> <p>Հիվանդների տվյալների պահոց, հաշվետվություններ և ծրագրային ապահովման հարթակի վերանայում (անհրաժեշտ է համակարգի համար):</p>

		<p>Պետք է լինի դյուրակիր շարժական՝ միաժամանակ ունենալով լիարժեք ֆունկցիոնալություն:</p> <p>Պետք է աշխատի նաև մարտկոցով:</p> <p>Հաշվետվությունների արագ և հեշտ կատարում</p> <p>Պետք է ապահովի մշտապես մաքուր ազդանշան, նույնիսկ կեղտոտ միջավայրում:</p> <p>Ներկառուցված հաշվետվությունների ծրագրակազմ, որը երաշխավորում է բարձր ճկունություն և համատեղելիություն:</p> <p>Ավտոմատ տեքստի գործառույթ, որն ապահովում է առավելագույն հարմարավետություն և հարմարեցված է պահանջներին:</p> <p>Ձեկույցների պահում տվյալների բազայում այն ձևաչափով, որը չի պահանջում լիցենզիաներ և փոխանցվում են հիվանդանոցների տեղեկատվական համակարգին:</p> <p>Քանակական EMG ծրագրակազմ</p> <p>Ծրագրային ապահովման մոդուլներ և լիցենզիաներ, առնվազն՝ շարժիչային և զգայական նյարդերի հաղորդունակություն, F-ալիք, H ռեֆլեքս, թարթման ռեֆլեքս, մակրո էՄԳ:</p> <p>Միջինացված սինգլի ցուցադրման հնարավորություն</p> <p>Շարժական միավորների գործողությունների պոտենցիալների քանակական վերլուծում իրական ժամանակում և համեմատություն նմուշների հետ:</p> <p>Արդյունքների ստատիկ վերլուծություն:</p> <p>Արդյունքների մշակում ըստ տրիգերային իմպուլսի</p> <p>SEP էլեկտրական խթանիչ:</p> <p>Ակտիվ էլեկտրոդների տեխնոլոգիա՝ հատկապես ազդանշանի լավ որակի համար:</p> <p>Դյուրին ինտերֆեյս:</p> <p>Առցանց ռեժիմում ազատորեն ծրագրավորվող չափման ծրագրեր:</p> <p>Ազդանշանների ձայնագրությունների պահպանում, վերարտադրում և դիտում:</p> <p>Ախտորոշման արդյունքների մուտքագրելու հնարավորություն և ամփոփ հաշվետվությունների կազմում MS Word կամ Microsoft Excel-ի տեսքով:</p> <p>Տվյալների անցանց վերանայում՝ պարամետրերի խմբագրման հնարավորությամբ:</p> <p>Ծրագիրը հավելյալ պետք է ունենա առնվազն՝ Voluntary Single Fiber, Stimulated Single Fiber, R-R Interval, SSR, Macro EMG, SEP, VEP մոդուլների հնարավորություն</p> <p>Անալոգային ժամանակի հաստատունը պետք է լինի ոչ պակաս քան 3.2, 0.32, 0.02:</p> <p>Անալոգային նմուշառման հաստատունը պետք է լինի ոչ պակաս քան՝ 50 կամ 60 կՀց յուրաքանչյուր կանալի համար:</p> <p>Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝ ոչ պակաս քան 10 GΩ զուգահեռ 25 pF:</p> <p><i>Աուդիո խթանիչ</i></p> <p>Առավելագույն ինտենսիվությունը՝ ոչ ավել քան 137 դԲ SPL:</p> <p>Խթանման քայլեր՝ ոչ ավել քան 1 դԲ:</p> <p>Խթանման տեսակ՝ ոչ պակաս քան սեղմում, բռնկում, տոնայնություն կամ ծրագրավորվող:</p> <p>Բևեռականություն՝ ոչ պակաս քան 3 տեսակ:</p> <p>Խթանման տևողություն՝ ոչ ավել քան 0.05 ms- 80ms:</p> <p>Խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 250Հց:</p> <p><i>Էլեկտրական խթանիչ</i></p> <p>Խթանման ինտենսիվություն՝ ոչ պակաս քան 0.1մԱ- 100մԱ:</p> <p>Բևեռականություն՝ ոչ պակաս քան 4 տիպի:</p> <p>Իմպուլսի տևողություն՝ ոչ պակաս քան 0.05-1ms:</p> <p>Խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 300Հց:</p> <p>Սարքը պետք է համավրած լինի հզոր դյուրակիր համակարգչով՝ առնվազն 470 տակտակին հաճախականությամբ G7 17,3" FHD մոնիտորով i5-10210U պրոցեսորով / 8 / 512 / DVD / AMD530 / W10 / 8MH45EA</p> <p>Համակարգի համար պետք է տրամադրվի երաշխիք -12 ամիս:</p> <p>Համակարգը պետք է տեղադրվի, տրամադրվի ուսուցում</p> <p>Համակարգի բոլոր բաղադրյալները պետք է մատակարարվի մեկ աղբյուրից և ունենա գործարանային երաշխիք:</p> <p>Շահագործման ձեռնարկը պետք է լինի ռուսերեն/լեզվով</p> <p>Ամբողջ համակարգի համար Сертификат Соответствия, FDA, CE, ISO</p>
--	--	---

## **5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 19.10.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

Ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:



5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ... կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ

է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 12.10.2021թ.-ին հայտարարված «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին չափաբաժնի մասով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	33141174/3	Նեյրոմիոգրաֆ EMG	Համակարգչային չափման համակարգ էՄԳ-ի և նյարդաբանության համար: Նեյրոֆիզիոլոգիական չափման համակարգերը պետք է կարողանան

		<p>լրացվել մոդուլներով և լինի առնվազն 6 կանալով:</p> <p>Ի լրումն ստանդարտ ECG ծրագրերի, նյարդահաղորդման արագությունների, համակարգը պետք է կարողանա համալրվել՝ կախված առաջադրանքներից, օրինակ՝ ECG-ի առաջադեմ վերլուծության ծրագիր (ներառում է ECG մեկ մանրաթել և մակրո- ECG), VEP, RR- ընդմիջում, մոնիտորինգի ծրագիր:</p> <p>Պետք է ապահովի կարճ նյարդերի պատասխաններ</p> <p>Պետք է ունենա ներկառուցված գրադարան</p> <p>Ասեղնային ECG պետք է նաև ապահովի ինտերֆերենցիոն պատտերնիգրանցում</p> <p>Մակերեսային միակնալ ECG ժամանակ պետք կարողանա տարբեր ծանրաբեռնվածություններ ի ժամանակ հետազոտել մեծ քանակի մկաններ</p> <p>Պետք է հազեցած լինի մուտքագրման միավորներով</p> <p>Պետք է ունենա հարմարավետ առանձին ներյոմիոգրաֆիկ ստեղնաշար, որի շնորհիվ հետազոտությունը կարող է վերահսկվել կողքից:</p> <p>Սարքը պետք է ունենա՝</p> <p>Հիվանդների տվյալների պահոց, հաշվետվություններ և ծրագրային ապահովման հարթակի վերանայում (անհրաժեշտ է համակարգի համար):</p> <p>Պետք է լինի դյուրակիր շարժական՝ միաժամանակ ունենալով լիարժեք ֆունկցիոնալություն:</p> <p>Պետք է աշխատի նաև մարտկոցով:</p> <p>Հաշվետվությունների արագ և հեշտ կատարում</p> <p>Պետք է ապահովի մշտապես մաքուր ազդանշան, նույնիսկ կեղտոտ միջավայրում:</p> <p>Ներկառուցված հաշվետվությունների ծրագրակազմ, որը երաշխավորում է բարձր ճկունություն և համատեղելիություն:</p> <p>Ավտոմատ տեքստի գործառույթ, որն ապահովում է առավելագույն հարմարավետություն և հարմարեցված է պահանջներին:</p> <p>Զեկույցների պահում տվյալների բազայում այն ձևաչափով, որը չի պահանջում լիցենզիաներ և փոխանցվում են հիվանդանոցների տեղեկատվական համակարգին:</p> <p>Քանակական EMG ծրագրակազմ</p> <p>Ծրագրային ապահովման մոդուլներ և լիցենզիաներ, առնվազն՝ շարժիչային և զգայական նյարդերի հաղորդունակություն, F-ալիք, H ռեֆլեքս, թարթման ռեֆլեքս, մակրո ECG:</p> <p>Միջինացված սինգալի ցուցադրման հնարավորություն</p> <p>Շարժական միավորների գործողությունների պոտենցիալների քանակական վերլուծում իրական ժամանակում և համեմատություն նմուշների հետ:</p> <p>Արդյունքների ստատիկ վերլուծություն:</p> <p>Արդյունքների մշակում ըստ տրիգերային իմպուլսի</p> <p>SEP էլեկտրական խթանիչ:</p> <p>Ակտիվ էլեկտրոդների տեխնոլոգիա՝ հատկապես ազդանշանի լավ որակի համար:</p> <p>Դյուրին ինտերֆեյս:</p> <p>Առցանց ռեժիմում ազատորեն ծրագրավորվող չափման ծրագրեր:</p> <p>Ազդանշանների ձայնագրությունների պահպանում, վերարտադրում և դիտում:</p> <p>Ախտորոշման արդյունքների մուտքագրելու հնարավորություն և ամփոփ հաշվետվությունների կազմում MS Word կամ Microsoft Excel-ի տեսքով:</p> <p>Sվյալների անցանց վերանայում՝ պարամետրերի խմբագրման հնարավորությամբ:</p> <p>Ծրագիրը հավելյալ պետք է ունենա առնվազն՝ Voluntary Single Fiber, Stimulated Single Fiber, R-R Interval, SSR, Macro EMG, SEP, VEP մոդուլների հնարավորություն</p> <p>Անալոգային ժամանակի հաստատունը պետք է լինի ոչ պակաս քան 3.2, 0.32, 0.02:</p> <p>Անալոգային նմուշառման հաստատունը պետք է լինի ոչ պակաս քան՝ 50 կամ 60 կԿց յուրաքանչյուր կանալի համար:</p> <p>Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝ ոչ պակաս քան 10 GΩ զուգահեռ 25 pF:</p> <p><i>Աուդիո խթանիչ</i></p> <p>Առավելագույն ինտենսիվությունը՝ ոչ ավել քան 137 դԲ SPL:</p> <p>Խթանման քայլեր՝ ոչ ավել քան 1 դԲ:</p>
--	--	--

			<p>Խթանման տեսակ՝ ոչ պակաս քան սեղմում, բռնկում, տոնայնություն կամ ծրագրավորվող:  Բևեռականություն՝ ոչ պակաս քան 3 տեսակ:  Խթանման տևողություն՝ ոչ ավել քան 0.05 ms- 80ms:  Խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 250Հg:  <i>Էլեկտրական խթանիչ</i>  Խթանման ինտենսիվություն՝ ոչ պակաս քան 0.1մԱ- 100մԱ:  Բևեռականություն՝ ոչ պակաս քան 4 տիպի:  Իմպուլսի տևողություն՝ ոչ պակաս քան 0.05-1ms:  Խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 300Հg:  Սարքը պետք է համալրված լինի հզոր դյուրակիր համակարգչով՝ առնվազն 470 տակտակին հաճախականությամբ G7 17,3" FHD մոնիտորով i5-10210U պրոցեսորով / 8 / 512 / DVD / AMD530 / W10 / 8MH45EA  Համակարգի համար պետք է տրամադրվի երաշխիք -12 ամիս:  Համակարգը պետք է տեղադրվի, տրամադրվի ուսուցում  Համակարգի բոլոր բաղադրյալները պետք է մատակարարվի մեկ աղբյուրից և ունենա գործարանային երաշխիք:  Շահագործման ձեռնարկը պետք է լինի ռուսերեն լեզվով  Ամբողջ համակարգի համար Сертификат Соответствия, FDA, CE, ISO 9001 կամ համարժեք որակի սերտիֆիկատների առկայություն:</p>
--	--	--	---

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Չարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի դիրքորոշումների և Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊԶԲ-21/08-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 ճափաբաժնի մասով սահմանված Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում

հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ուստի ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են համապատասխանեցման նշված դրույթների պահանջներին:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և չեն բավարարում մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Բողոքի քննության ընթացքում բողոքաբերի և Պատվիրատու կողմից ներկայացված հանգամանքները համադրելով գործով ձեռք բերված ապացույցներին ու փաստական տվյալներին, ինչպես նաև դրանք դիտարկելով սույն որոշմամբ արված վերլուծությունների ու եզրահանգումների համատեքստում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից որպես Հրավերի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին համարժեք ապրանք ներկայացված այլ արտադրողի MEB-9400K մոդելի սարքավորումը հանված է արտադրությունից, իսկ վերոնշյալից բացի այլ արտադրողի ապրանքի համարժեք լինելու վերաբերյալ Պատվիրատուն որևէ ապացույց չի ներկայացրել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը 1-ին չափաբաժնի մասով պետք է հայտարարել չկայացած՝ սույն որոշմամբ արված վերլուծությունների ու դատողությունների հիման վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

### Ո Ր Ո Շ Ե Ց

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 19.10.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/99 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/08-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



**ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**